

**ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆԵՐ: ՀՆԱ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ**

Բնությունը մարդակերպի նկատմամբ շռայլ է գտնվել, նրան օժտել է մտածելու և աշխատանք կատարելու հնարավորություններով: Այս հատկությունների օգտագործումով մարդը ձևավորել և օգտագործել է մտածված գործելու, նպատակային ուղղվածությամբ աշխատանք կատարելու կամ, այլ կերպ, գիտակցված գործունեություն (ԳԳ) իրականացնելու կարողություն: Վերջինի կիրառման գործընթացներում մարդը հանդիպել է իր էությանը, շրջակա միջավայրին, բնության տարաբնույթ երևույթներին առնչվող շատ խնդիրների: Հարկադրված է եղել և ձգտել է ճանաչել դրանք, գտնել դրանց բացատրություններն ու առաջացման պատճառները, փորձել է ազդել գործընթացների վրա կամ հնարավորինս ծառայեցնել դրանք իր պահանջմունքների բավարարմանը: Արդյունքում մարդկության գոյատևման միլիոնավոր տարիների ընթացքում, իր պահանջմունքների բավարարման էական բարելավման հետ մեկտեղ, մարդու կուտակած փորձն ու գիտելիքի պաշարն աստիճանաբար քանակապես և որակապես մեծ չափով զարգացել են: Համապատասխանաբար աճել են նաև մտածելու և վերլուծելու ընդունակությունն ու գիտակցված գործունեություն իրականացնելու կարողությունը: Դա, իր հերթին, պայմաններ է ստեղծել մարդկային հասարակության ինտենսիվ զարգացման և ներկա քաղաքակրթությունը կերտելու համար:

Ենթադրվում է, որ այս օրինաչափությունը, որն իրավամբ կարելի է անվանել *մարդկային հասարակության (ՄՀ) անշեղ զարգացման պատմականորեն ապացուցված տնտեսագիտական օրենք*, շարունակվելու է նաև մարդկության գոյության հետագա ժամանակաշրջաններում: Այդ օրենքի գործողության անխափան շարունակումը և հասարակության ինտենսիվ զարգացման ապահովումն այսպիսով դառնում է մարդկության համընդհանուր ձգտումը, որը կարելի է ընդունել որպես *մարդկության գոյատևման և զարգացման կամ զարգացող գոյատևման գլոբալ նպատակ*: Եվ քանի որ մարդկության զարգացման հենքը և միջոցն, ըստ այժմյան գերիշխող գաղափարախոսության, մարդու գիտակցված գործունեությունն է, ապա դրանով իսկ որոշակիացվում է նաև վերջինի նպատակայնությունը՝ *մարդկության զարգացող գոյատևման ապահովումը*: Այն փաստորեն դառնում է մարդկային ԳԳ հիմնարար պարադիգմը և դրվելու է ցանկացած գործունեության հիմքում, ուղղորդելու է առնչվող ցանկացած խնդրի լուծումը:

Հետագա զարգացման բարձր ինտենսիվությունն ապահովելու համար մարդկությունն էլ ավելի խորությամբ և լայն ընդգրկումով պետք է ճանաչի նշված օրենքն ու օրինաչափությունը, հնարավորինս օժանդակի դրա գործունեությանը նպաստող գործոնների ակտիվության բարձրացմանը, բացահայտի և կիրառի զարգացումը խոչընդոտող գործոնների չեզոքացմանը կամ դրանց ազդեցությունը նվազագույնի հասցնելու միջոցները:

Այս նպատակադրումների իրագործման արդյունավետ ճանապարհն այժմ համարվում է մարդկային այնպիսի հասարակության ձևավորումը, որի գոյատևումն ու զարգացումն իրականացվելու են համընդհանուր և բարձր գիտելիքահենք գործունեության միջոցով՝ անվանելով այն *գիտելիքահենք կամ գիտելիքի հասարակություն* (ԳՀ): Դա նշանակում է, որ ձևավորված ԳՀ-ում մարդկությունը պետք է խորապես ճանաչի իրեն և իր պահանջմունքները, իմանա շրջապատող

կենսամիջավայրը, մանրամասնորեն ուսումնասիրի դրանում առկա երևույթներն ու գործընթացները, դրանք պայմանավորող պատճառներն ու մեխանիզմները, բացահայտի ազդեցության ուղղություններն ու հետևանքները, գտնի դրանք կանոնակարգելու միջոցները, մշակի կիրառման մոտեցումներն ու տեխնոլոգիաները, որպեսզի այդ հենքի վրա շարունակվի իր զարգացումը:

Մարդկությունը պետք է կարողանա լավագույնս գոյատևել և զարգանալ, պահպանել և բարելավել իրեն և իր կենսամիջավայրն ինչպես մոտակա, այնպես և երկարատև ժամանակահատվածներում: Որպես գիտակից էակ՝ մարդը մշտապես գործելու է միանշանակ նպատակադրված և արդյունավետ, այլ ոչ թե միայն ականատես լինի բնության գործողություններին ու փնտրի դրանց արդյունքներն իր պահանջմունքների բավարարմանը ծառայեցնելու հնարավոր ուղիներ: Այս նպատակի իրագործմանն է ծառայելու նաև մարդկության գիտելիքաստեղծ գործունեությունը, գիտելիքի կուտակված պաշարը և դրա բազմացումը, գործնական կիրառությունը և հասարակության կառավարման ողջ համակարգը:

Որպես մտածելու և աշխատանք կատարելու հնարավորություն ունեցող էակ՝ մարդն, իհարկե, այսպես է գործել նաև նախկինում՝ իր տեսակի ստեղծման ժամանակից սկսած: Սակայն այդ գործունեության գիտակցվածության մակարդակը շատ ավելի ցածր է եղել՝ պայմանավորված մարդու զարգացման նույնպես ցածր աստիճանով: Համապատասխանաբար ցածր են եղել նաև գործունեության արդյունքն ու արդյունավետությունը, հետևաբար նաև մարդկության զարգացման ինտենսիվությունը: Գիտակցվածությունն ու գիտելիքահենքությունը մարդկային գործունեության բնական բնութագրերն են, որոնք մարդկության զարգացման հետ համընթաց, ընդ որում, որպես կանոն, ավելացող ինտենսիվությամբ աճում են: Հիմքը մարդու զարգացումն է, մտածելու ընդունակության և գիտակից գործելու կարողության աճը, գիտելիքաստեղծ գործունեության արդյունքում ստեղծված օգտակար գիտելիքի պաշարը, կատարված աշխատանքի շնորհիվ կուտակված փորձը, որոնք փոխանցվել են սերնդից սերունդ: Այս գործընթացների շարունակումը և բնութագրերի աճն ապահովելու են մարդկության ինտենսիվ զարգացում նաև հետագայում, եթե անկանխատեսելի գործոնները չխոչընդոտեն կամ չխաթարեն այն: Այդ արգելքների դեմ հնարավոր պայքարը և մարդկության անվտանգ զարգացման ապահովումը ևս գիտակցված ու գիտելիքահենք գործունեության խնդիր պետք է դառնա:

Իր գիտելիքաստեղծ և գիտակցված գործունեության ընթացքում մարդկությունը բացահայտել և առաջադրել է իր անվտանգ և արդյունավետ գոյատևմանը ուղղակիորեն կամ միջնորդավորված ձևով առնչվող տարաբնույթ և բազմաթիվ խնդիրներ: Փնտրել է և զարգացման յուրաքանչյուր փուլի առանձնահատկությունների հաշվառումով, իր հնարավորությունների սահմաններում, դրանց որոշակի լուծումներ է գտել: Ապահովել է դրանց օգտակար կիրառությունը կյանքում: Այդ ճանապարհով ապահովել է նաև հասարակության և դրա անդամների զարգացումը:

Մարդու ԳԳ շնորհիվ է, որ մարդկությունն ընտրել է *հասարակական զարգացման ուղին*, ինչը հանգեցրել է հասարակության շահերի պաշտպանության և պահանջմունքների բավարարման առաջնայնության գիտակցմանը, բայց ոչ հասարակության անդամ-սուբյեկտների իրավունքների անտեսման, այլ դրանց փոխհամաձայնեցման միջոցով: ԳԳ ուղին է, որ օժանդակել է մարդկությանն անցնել զարգացման իր փուլերը՝ բնության բարիքներից պասիվ օգտվելու, որսորդության և ձկնորսության, գյուղատնտեսական և անասնաբուծական արտադրության, արդյունաբերության և կլաստերացման, իսկ այժմ արդեն հետարդյունաբերական (պոստինդուստրիալ) դարաշրջանները: Ձուգահեռաբար զարգացում են ստացել կրթությունը, առողջապահությունը, մշակույթը, սպորտը, գեղարվեստը, գիտությունը, բարոյահոգեբանական գործունեության այլ ոլորտներ:

ԳԳ հասարակական էությունն ու կազմակերպումը հիմք են դարձել մարդկության կյանքի համընդհանրացման (գլոբալացման) և առանձին հատվածների ինտեգրման համար, ինչը ծառայում է նաև մարդկային ամբողջական հասարակության ձևավորմանը, գիտելիքի և փորձի

լայն փոխանցման հնարավորությունների ստեղծմանը և զարգացմանը, տարածաշրջանային տարբերությունների զգալի կրճատմանը: Գ-Գ միջոցով են արմատավորվել աշխատանքի բաժանումն ու որակի բարձրացումը, գործունեության և այն իրականացնող կադրերի մասնագիտացումը: Շրջադարձային են բարձրորակ գիտական կադրերի պատրաստման համակարգի ձևավորումն ու գիտելիքաստեղծ գործունեության առանձնացումն ու զարգացումը, որի արդյունքները նոր տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների նորամուծությունների աղբյուր են դառնում և հնարավորություն ստեղծում գործունեության ոլորտների հետագա զարգացման համար:

Կարևորագույն ձեռքբերում է հանրության և դրա կազմում ներառված գործունեության ոլորտների ղեկավարման գործառույթների կատարման առանձնացումը, որպես կառավարման ոլորտ, և դրա շարունակական համալրումը բարձրորակ մասնագիտական կադրերով: Մարդկային գործունեության ցանկացած հատվածի նպատակային կառավարումն է հնարավորություն ընձեռում խուսափել խոշոր սխալներից՝ և դրանց հետևանքով տնտեսությանն ու հասարակությանը հասցվող վնասներից, կանխատեսել հնարավոր փոփոխությունները և պատրաստ լինել դիմակայելու դրանց բացասական ազդեցություններին, ձևավորել զարգացման ռազմավարություն և մշակել այն իրականացնելու նպատակահարմար միջոցառումներ: Վերջին հաշվով հենց Գ-Գ-ն է, որի միջոցով բացահայտվել է մարդկության հետագա զարգացման ճիշտ ուղին՝ Գ-Հ ստեղծումը, բարձր ՄԿ ձևավորումը և լայն օգտագործումը:

Գ-Գ արդյունքները բազմաթիվ և բազմազան են, դրանք բոլորովին էլ չեն սահմանափակվում վերը թվարկած հիմնարար ուղղություններով: Մյուս կողմից, մարդկության շարունակական զարգացումը, պահանջումների և պայմանների փոփոխությունները, հասարակության ինտենսիվ զարգացման և բարձրորակ կադրերով ապահովված լինելու աճող պահանջը շարունակական են դարձնում նաև նոր գիտելիքի ձևավորման և կիրառման գործընթացները ողջ հասարակության առումով և գործունեության յուրաքանչյուր ոլորտում՝ հաշվի առած դրանց առանձնահատկությունները, դրանցում առկա պայմաններն ու վերջինների փոփոխման հնարավորությունները նաև հետագա ժամանակահատվածներում: Այս իրողությունն անհրաժեշտ է դարձնում նոր գիտելիքի և դրա հիմքի վրա նոր տեխնոլոգիաների ստեղծման ու կիրառման գործընթացները մասնագիտացնել ըստ գործունեության ոլորտների՝ ապահովելով դրանց բարձրորակ իրականացումը համապատասխան մասնագետներով: Այս պահանջը առավել է կարևորվում այն ոլորտներում, որոնք ընդհանրական են, այսինքն՝ սպասարկում են մարդկային գործունեության ցանկացած ոլորտ: Այսպիսին են առաջին հերթին *գիտությունն* ու *կառավարումը*, որոնց կարևորությունը Գ-Գ ողջ համակարգի զարգացման գործում հուշում է նաև դրանց առաջնահերթ զարգացում ապահովելու անհրաժեշտությունը:

Կառավարումն ու գիտությունը ցանկացած գործունեության անբաժան ուղեկիցներն են և դրա գիտակցված լինելու ապահովումները: Առաջինի գործառույթը գործունեության ճիշտ ուղղորդումն է, իսկ երկրորդը՝ գիտությունը, հետազոտում է այդ գործունեությունը, մշակում է դրա ուղղորդման գործառույթի ճիշտ կատարման հիմքերն ու միջոցները (տեխնոլոգիաները): Առանց այդ ապահովումների գործուն միջամտության գործունեությունը ճիշտ ուղղորդված, հետևաբար և մարդկային Գ-Գ-ին առաջադրվող պահանջներից համապատասխանող չի կարող համարվել: Այն, որպես կանոն, արդյունավետ չէ, այսինքն՝ չի ծառայում իր նպատակների իրագործմանը:

Գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված տարատեսակ մոտեցումները, ինչպես օրինակ, ազատ մրցակցության, աշխատանքի մոտիվացիայի ստեղծման և խթանման, արդյունքի որակի բարձրացման և այլ տեսությունները, տնտեսագիտության արդյունքներ են և ծառայում են կառավարման որակի բարձրացմանը, և չեն կարող փոխարինել կառավարումը: Դրանց իրականացումն ինքնին պահանջում է կառավարչական միջամտություն:

ԳԳ ոլորտներում և նույնիսկ առանձին ճյուղերում առկա պայմանների, գործառնությունների, նպատակների, գործողությունների և դրանց իրականացման տեխնոլոգիաների, աշխատանքի առարկաների, միջոցների ու կազմակերպական ձևերի և շատ այլ բնութագրերի տարատեսակությունը պայմանավորում է գործունեության կառավարման՝ առանձնահատկությունների հաշվառումով բազմակողմ հիմնավորված մոտեցումների կիրառում: Դա նշանակում է կառավարման գործառնությունների, հետևաբար նաև դրանց կատարման, հիմքերի մշակման, հետազոտությունների իրականացման մասնագիտացման անհրաժեշտություն ըստ գործունեության ոլորտների: Իսկ դա, իր հերթին, նպատակահարմար է դարձնում ճյուղային կառավարման գործունեությունների և դրանք սպասարկող ճյուղային գիտությունների առանձնացումը, որի արդյունքում կձևավորվեն ԳԳ կառավարման և ԳԳ գիտական հետազոտության համակարգերը: Դրանցում ենթադրվում է ԳԳ հիերարխիկ կառուցվածքավորմամբ առանձնացված յուրաքանչյուր ոլորտի և ճյուղի համար, դրանց առանձնահատկություններին համապատասխանող, կառավարման և գիտական-հետազոտական գործունեությունների ճյուղերի առանձնացում: Դա կարելի է կատարել մորֆոլոգիական վերլուծության մեթոդի կամ, այլ կերպ, մատրիցային մոտեցման կիրառությամբ, ուստի այստեղ այդ մանրամասներին չենք անդրադառնա: Մանավանդ որ այդպիսի առանձնացումներ ԳԳ համակարգում այժմ, մասնակիորեն կառավարման և գիտության ոլորտներում (տնտեսության առանձին ճյուղերի տնտեսագիտություն կամ կառավարում անվանումներով) մասամբ առկա են: Սակայն դրանք համակարգված բնույթ չունեն և գիտականորեն հիմնավորված ձևով չեն ներկայացված: Այդպիսի ամբողջական համակարգումը, կարծում ենք, օգտակար կլիներ: Այն կօգներ նաև պարզորոշել կառավարման և գիտական հետազոտությունների առանձնացվող գործունեությունների գործառնությունների կազմը: Կարծում ենք՝ այդ գործունեությունների (կառավարման և գիտական հետազոտությունների) հիերարխիկ կառուցվածքի վերին մակարդակում դիտարկվելու են ռազմավարական (ընդհանրական) խնդիրները, իսկ ստորադաս մակարդակներում կառավարման և հետազոտության առարկա են դառնալու յուրաքանչյուր ճյուղի առանձնահատկություններով պայմանավորված աշխատանքների կատարումը և խնդիրների լուծումը:

Նկատի ունենալով գործունեության որոշ ճյուղերի ընդհանրական բնույթը, այսինքն՝ կիրառելու անհրաժեշտությունը ԳԳ ցանկացած ոլորտում, վերն առաջարկված համակարգում նպատակահարմար է առանձնացնել նաև այդպիսի ընդհանրական գործունեությունների զուգորդումները: Մասնավորապես կառավարումն ու գիտությունը միացյալ դիտարկելիս բերում է ԳԳ նաև հետևյալ մասնագիտացված ճյուղերի առանձնացմանը.

- կառավարման մասին գիտություն և գիտության կառավարում,
- գիտության մասին գիտություն,
- կառավարման գործառնությունների կառավարում:

Եթե թվարկածներից *կառավարման մասին գիտությունը* և *գիտության կառավարումը* գործնականում առանձնացված և փաստորեն գոյություն ունեն, ապա մյուս երկուսը որպես գործունեության ճյուղեր ոչ միայն առանձնացված չեն, այլև փաստորեն մերժված է դրանց գոյությունը: *Կառավարման գործառնությունների կառավարումը* մասամբ փոխարինված է կառավարման հիերարխիայի դիտարկմամբ և աշխատակազմի կառավարում հասկացությամբ: *Գիտության մասին գիտությունը*, չնայած մարդկության զարգացման գործում գիտության հիմնարար դերին և կարևորագույն նշանակությանը, ինչն ամեն առիթով հայտարարվում է մեր հանրապետության ղեկավարության կողմից, փաստորեն անտեսված է: Գործունեության այդ ճյուղի ձևավորումն ու զարգացումն այժմ պաշտոնապես հրատապ խնդիր պետք է համարվի և պետական քաղաքականության առաջնայնություն հայտարարվի: Վաղուց արդեն ժամանակն է այդ նպատակով ձեռնարկել նպատակային ծրագրի մշակումը՝ ներգրավելով այդ գործում հանրապետության գիտական ներուժն ու օգտագործելով նաև արտասահմանի փորձը:

Ընդհանրական Գ-Գ ընդգրկումը ընդլայնելու դեպքում նշված գույքորդումների թվաքանակը զգալիորեն կընդարձակվի, սակայն այն հնարավորություն կընձեռի ավելի պարզորոշ պատկերացումներ ունենալու ՀՀ համակարգի կազմի ու կառուցվածքի վերաբերյալ: Դա, ինչ խոսք, կօժանդակի այդ համակարգի կառավարման կազմակերպման բարելավմանը և որակի բարձրացմանը, օգտակար կլինի հանրապետությունում կառավարման և գիտության ոլորտներում բարեփոխումների միջոցառումներ և ծրագրեր ձևավորելու համար:

Մյուս կողմից, նկատի ունենալով կառավարման և գիտության ոլորտների ինստիտուցիոնալ հիերարխիկ համակարգերի ստորին մակարդակներում ենթաճյուղերի ոչ մեծ չափերը, առավել ևս փոքր երկրներում, կասկածելի է դառնում նշված ուղղություններով գործունեության մարմինների առանձնացված գոյության նպատակահարմարությունը: Առաջ է գալիս դրանց հիերարխիկ (ըստ կառավարման կամ գիտության կառուցվածքի մակարդակների) կամ հորիզոնական (ըստ գործունեության ձևերի, այստեղ դիտարկվող դեպքի համար՝ կառավարման և գիտության) միավորման խնդիր: Լուծումը հանգեցնում է նշված համակարգերի կազմակերպական (իրական) կառուցվածքների ձևավորմանը: Որպես օրինակ կարող է ծառայել կառավարող մարմիններում, այդ թվում նախարարություններում մեթոդաբանության ստորաբաժանումների ստեղծումը կամ կառավարչի պարտականությունների մեջ մեծ զիտական հիմնավորման գործառույթները ներառելը: Սակայն այս մոտեցումը լուրջ հիմնավորման կարիք ունի, քանի որ, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, գործառույթների կազմի ընդլայնումը, որպես կանոն, բերում է տարբեր ուշադրության դրանց իրականացմանը՝ կախված գործառույթներն իրականացնողի նախասիրություններից և պայմաններից: Բացի այդ, դեռ գոյություն չունի նշված միավորմամբ նպատակահարմար տարբերակի (ըստ ձևի և ընդգրկման) ընտրության գիտականորեն բավարար հիմնավորված մոտեցում: Կարծում ենք՝ վերջինի մշակումը ևս հրատապություն է՝ խուսափելու համար անբավարար գիտելիքահենք վճիռներ ընդունելուց: Ծախսերի տնտեսումը ևս արդյունավետ պետք է լինի:

Որպես գործունեության ոլորտ՝ կառավարման հիմնական գործառույթը, ինչպես նշեցինք, հիմնավորված կառավարչական որոշումներ ընդունելու և կյանքում իրագործելու միջոցով մարդկային հասարակության զարգացման հիմքն ու միջոցը հանդիսացող Գ-Գ ճիշտ ուղղորդումն է: Այլ գործառույթների կատարումն ուղղակիորեն ծառայում կամ օժանդակում է այս հիմնական նպատակի իրագործմանը: Որոշումների ընդունման գիտելիքային հիմքը ապահովվում է ինչպես կառավարման, այնպես և Գ-Գ այլ ոլորտների մարմինների կողմից, ընդ որում մեթոդական կողմի ապահովումը կառավարման գիտության գործառույթն է:

Կառավարչական որոշումները տարբեր ուղղվածություններ կարող են ունենալ, վերաբերել հասարակության, տնտեսության կամ առանձին ոլորտների զարգացմանը, նպատակադրումների ձևավորմանը, քաղաքականության, դրա ռազմավարության ու մարտավարության մշակմանը, նորարարության զարգացմանն ու նորամուծությունների ընդլայնմանը, նոր ձեռնարկությունների ու կազմակերպությունների հիմնմանը, եղածների բարեփոխմանն ու վերարտադրությանը, գործունեության ուղղվածության փոփոխությանն ու շատ այլ հարցերի ու խնդիրների լուծմանը: Որոշումներն առաջարկելիս, հիմնավորելիս կամ ընդունելիս կառավարիչը կարող է օգտվել տարբեր մոտեցումներից: Դրանք խոշորացված ու խմբավորված կարելի է արտահայտել որպես հետևյալ տեսակի միջոցների օգտագործում.

- հանկարծահաս (իմպուլսիվ),
- ներզգացողային (ինտուիտիվ),
- կուտակված փորձի և գիտելիքի պաշարի օգտագործումով,
- դիտարկվող կամ ենթադրական լուծումը փորձարկելու և անճշտություններն ուղղելու միջոցով (փորձի և սխալումների մեթոդ),
- տեսահայեցողական մտածողության (գիտական արստրափնան մեթոդի) օգտագործումով:

Չնայած իմաստային զգալի տարբերություններին և յուրաքանչյուրի օգտագործումից ստացվող արդյունքների (առաջարկվող լուծումների) հնարավոր տարբերությանը՝ այս եղանակները որոշակի առումով փոխկապված են, ունեն ընդհանրություններ: Պատճառն այն է, որ դրանց բոլորի հիմքում ընկած է մարդուն ընձեռված մտածելու ընդունակությունը, որի օգտագործումը (երևույթների կոգնիտիվ ընկալման մոտեցումների կիրառությունը) հնարավորություն է տալիս մարդուն ձևավորել դիտարկվող խնդրի որոշակի լուծում: Այս մույն պատճառը, նկատի առած նաև լուծում առաջարկող սուբյեկտների մոտ մտածելու տարբեր ընդունակությունները, մասամբ պայմանավորում է նաև թվարկած մոտեցումների միջև որոշակի տարբերությունները, ինչը հնարավոր է դարձնում լուծումներ ստանալու համար օգտագործել յուրաքանչյուր մոտեցումը առանձնացված կամ նաև որոշակի գույքորդումներով մնացյալ մոտեցումների հետ:

Թվարկած մոտեցումների էության համեմատական տրամաբանական վերլուծությունը բերում է այն համոզման, որ բացառել դրանցից որևէ մեկի կիրառման հնարավորությունը կառավարման գործընթացներում հազիվ թե կարելի է ճիշտ համարել, քանի որ յուրաքանչյուրին հատուկ են որոշակի թերություններ: Միայնի հավանականությունը կամ ռիսկի մեծությունը տեսականորեն համեմատաբար մեծ է առաջին մոտեցմամբ և աստիճանաբար նվազում է յուրաքանչյուր հաջորդում: Առավել հիմնավորված կարելի է համարել վերջին՝ գիտական արստրանիման մեթոդը վստահ լինելով, որ դրա հիմքում դրված տեսական դրույթները համապատասխանում են դիտարկվող երևույթի էությանն ու առկա պայմաններին: Սակայն այդպիսի վստահություն չատ քիչ դեպքերում է հնարավոր ունենալ: Գործնականորեն ավելի հավաստի կարող է թվալ *փորձի ու սխալումների* մեթոդը, որի կիրառումը սակայն ոչ միշտ է նպատակահարմար՝ բազմակի փորձարկումներ կատարելու պատճառով, մանավանդ տնտեսության կամ հասարակության կառավարման գործընթացներում: Այս տեսանկյունից, կարծում ենք, առավել ընդունելի է վերջին՝ տեսահայեցողական մոտեցումը, որի փորձարկումը կարող է կատարվել տեսության փորձաքննության ձևով: Այդ նպատակով կարելի է լուծման ավելի բարձր հիմնավորում ունենալ, սակայն հազիվ թե հնարավոր է լիովին խուսափել սխալի հավանականությունից: Վերջնական եզրահանգումն այն է, որ կառավարչական որոշումների ձևավորման համար առավել նպատակահարմար կարող է համարվել լայն փորձաքննություն անցած գիտատեսական մոտեցումը:

Ըստ էության այդպիսի փորձաքննությունն օգտակար կարող է լինել վերը թվարկած մոտեցումներից ցանկացածի օգտագործման դեպքում, քանի որ կարող է օգնել բացահայտելու թույլ տրված սխալը: Այդպիսի փորձաքննությունն իրականացնելու լավագույն մոտեցումը, կարծում ենք, կառավարչական որոշման բազմակողմ գնահատումն ու վերլուծությունն է, ինչպես նաև դրանց արդյունքների հաշվառումը կառավարման գործառնությունների կատարման բոլոր փուլերում՝ խնդիրը բացահայտելիս, դրա ազդեցությունը գործունեության վրա գնահատելիս, լուծման անհրաժեշտությունը հիմնավորելիս և մոտեցումը ընտրելիս, ծրագիրը մշակելիս, ընդունելիս, փոփոխություններ կատարելու նպատակահարմարությունը որոշելիս, ծրագրերն իրականացնելիս և այլն: Եվ քանի որ դիմամիկ տնտեսությունում մշտապես առկա են խնդիրներ, որոնց լուծումը կամ արդեն ստացված լուծումների վերանայումը կառավարող մարմնի գործառնություն է, ապա կառավարչական միջոցառումների գնահատումը և վերլուծությունը փաստորեն դառնում են կառավարման կարևոր գործառնություններ: Դրանց իրականացման մեթոդական հիմքի մշակումը կամ առկա պայմաններին հարմարեցումը կառավարման գիտական ապահովման պարտականությունն է:

Այս գործառնությունների բարձրորակ կատարման կարևորությունը կառավարման որակի և արդյունավետության վրա դրա զգալի ազդեցության տեսանկյունից անհրաժեշտ է դարձնում կառավարչական որոշումների և դրանց իրականացման նպատակային գնահատման ու վերլուծության գիտագործնական համակարգի ստեղծումը հանրապետությունում: Այդ աշխատանքներին պետական օժանդակությունն ու անմիջական մասնակցությունը, կարծում ենք, անհրա-

ժեշտություն է:

Ստորև, որպես օրինակ, հակիրճ դիտարկենք երկրի տնտեսական զարգացման մակարդակի կարևորագույն բնութագիր համարվող *համախառն ներքին արդյունքի* (ՀՆԱ) գնահատման այժմ ընդունված մեթոդական մոտեցումը՝ ցույց տալու համար դրանում փոփոխություններ կատարելու նպատակահարմարությունը:

Տնտեսագիտական գրականությունում ՀՆԱ-ի էությունը ընկալվում է միանշանակ, այն սահմանվում է որպես երկրի տնտեսությունում մեկ տարվա ընթացքում արտադրված բոլոր վերջնական ապրանքների և ծառայությունների ընդհանուր (գումարային) արժեք: Հիմնավորված է, որ այն կարելի է ներկայացնել տարբեր մոտեցումներով՝ յուրաքանչյուրում օգտագործելով գնահատման իր համապատասխան ցուցանիշները, որոնք վերջին հաշվով արտահայտում են տվյալ տարում արտադրված արդյունքների շուկայական գումարային արժեքը: Դրանք են.

1. արտադրական մոտեցում. ՀՆԱ-ն որոշվում է որպես տվյալ տարում յուրաքանչյուր ճյուղի արտադրական գործընթացներում ավելացված արժեքների գումար,
2. բաշխումային մոտեցում. ՀՆԱ-ն ներկայացվում է որպես տարեկան արդյունքի արտադրության գործոնային եկամուտների գումար,
3. ծախսումային մոտեցում. ՀՆԱ-ն հավասարեցվում է երկրում տարվա ընթացքում արդյունքների ու ծառայությունների արտադրության վրա կատարված ծախսումների գումարին,
4. սպառման կամ վերջնական օգտագործման մոտեցում. ՀՆԱ-ն հավասարեցվում է ստեղծված արդյունքների իրացումից ստացված գումարային եկամտին:

Հարցը, կարծում ենք, դիտարկվելու է տարբեր տեսանկյուններից: Նախ որոշվելու է, թե ինչ ճշգրտությամբ են թվարկած մոտեցումները արտահայտում արտադրվող արդյունքի իրական արժեքը, քանի որ ՀՆԱ-ն կոչված է հենց այդ բնութագիրը որոշակիացնելուն: Երկրորդ տեսանկյունը այդ մոտեցումների միջոցով փաստացի արտադրված ապրանքների և ծառայությունների ընդգրկման աստիճանի գնահատումն է: Հաջորդ անհրաժեշտությունն այն հարցի պարզորոշումն է, թե օգտագործվող մոտեցումների միջոցով ՀՆԱ-ի որոշումը ինչ չափով է ապահովում տարբեր երկրների համեմատական գնահատման հնարավորությունը ըստ այդ բնութագրի: Եվ, վերջապես, հիմնավորման կարիք ունեն այդ մոտեցումներում փոփոխություններ կատարելու հնարավորությունն ու նպատակահարմարությունը՝ նշելով, թե ինչպիսին պետք է լինեն այդ փոփոխությունները:

ՀՆԱ-ի գնահատման արտադրական մոտեցումը ադեկվատ է մարդկային գործունեության միջոցով նոր արդյունք ստեղծելու և դրա արժեքը ավելացվող արժեքների գումարի ձևով արտահայտելու էությանը: Մարդն իր գիտակցված գործունեության միջոցով նպատակադրում և արտադրում է մարդու և հասարակության կարիքները բավարարող պահանջարկ ունեցող արդյունքներ: Այդ գործընթացում օգտագործվում են արտադրության տարաբնույթ միջոցներ, որոնք կիրառվող աշխատանքի օգնությամբ համատեղվում և ձևավորում են նոր արդյունք՝ իր նոր բնութագրերով և արժեքով: Ըստ *արժեքի պահպանման տնտեսագիտական օրենքի*՝ բնության մեջ ոչնչից ոչինչ չի ստեղծվում, աշխատանքի միջոցով ստեղծված արդյունքի արժեքում ներառվում են օգտագործված միջոցների և դրանց համատեղելու համար կատարված աշխատանքի արժեքները: Եվ քանի որ արտադրական գործունեությունը շարունակական է, ապա այն իրականացնող միջոցները, ըստ *կապիտալի պահպանման տնտեսագիտական օրենքի*, պետք է մշտապես առկա լինեն, հետևաբար և պարբերաբար վերարտադրվելու են իրենց կիրառված մասով: Այստեղից հետևում է, որ նոր ստեղծվող արժեքն իր բովանդակությամբ ներկայացնում է արտադրության գործընթացում ավելացված արժեքը, ուստի վերջնական արդյունքի մեծությունը որոշվում է այն արտադրելու հաջորդական փուլերում ավելացված արժեքների գումարի ձևով:

Կիրառված բազմաբնույթ միջոցների և արտադրության գործընթացներում դրանք միավորող աշխատանքի արժեքները գումարելու համար անհրաժեշտ է դրանք բոլորը ներկայացնել

չափման նույն միավորներով, որոնք սույն դիտարկվող դեպքում կարող են լինել դրանց դրամական (արժեքային) արտահայտությունը: Սակայն արտադրության այդ բաղադրիչների **արժեքը** միայն հասկացություն է, ընդ որում՝ քանակապես գնահատելու տեսանկյունից անորոշ, ուստի անորոշ կլինեն նաև դրանց միավորված արժեքը և ավելացված արժեքի մեծությունները: Այս հանգամանքը ստիպել է արժեքն արտահայտել, իսկ ավելի ճիշտ կլինի ասել, փոխարինել արդյունքների և ծախսումների շուկայական գներով: Այս պարտադրված փոխարինումը ՀՆԱ-ի տնտեսագիտական էությունից դրա գնահատման մոտեցման առաջին լուրջ շեղումն է, քանի որ արժեք և շուկայական գին հասկացություններն իրենց առաջացման գործոններով, կարծում ենք, լրջորեն տարբերվում են: Սակայն դրան առայժմ այլընտրանք չկա, քանի որ այդ տարբերությունը հնարավոր չէ քանակապես որոշակիացնել՝ արժեք հասկացությունը գնահատելու այժմ դեռ անհաղթահարելի դժվարությունների պատճառով: Մյուս կողմից, նկատի ունենալով խնդրի կարևորությունը, կարծում ենք, դրա գիտական հետազոտությունը անուշադրության չպետք է մատնվի, մանավանդ որ նշված փոխարինումը պայմանավորում է նաև ՀՆԱ-ի կազմում միայն շուկայական սպառում ունեցող արդյունքներ ներառելու ոչ բավարար հիմնավորում ունեցող մոտեցումը:

ՀՆԱ-ի ծավալը որոշելիս կարևորվելու է ոչ թե սպառողը, այլ դրանում կրկնահաշվարկի հնարավորության բացառումը: Իսկ շուկայական մոտեցումը բերում է ՀՆԱ-ի թերհաշվառման, նրանում չի ներառվում արդյունքի սեփական վերջնական սպառման համար արտադրված մասը, որը հասարակությունում, առավելապես դրա տնային (ընտանեկան) տնտեսությունների հատվածում, զգալի մեծություն կարող է կազմել: Այստեղ կարևորվում է կանացի համարվող և հիմնականում կանանց կողմից ընտանիքում կատարվող աշխատանքը, որի միջոցով ստեղծվող արդյունքը (հիմնականում ծառայությունների ձևով) չի ներառվում ՀՆԱ-ի կազմը: Նույն ձևով ոչ լրիվ են հաշվառվում նաև սեփականություն հանդիսացող միջոցներով (բնակարան, մեքենաներ, այլ շարժական կամ անշարժ գույք) տերերին մատուցվող ծառայությունները: Իր ոչ լրիվ ծավալով է ՀՆԱ ներառվում հասարակության գոյատևման և զարգացման համար մեծ կարևորություն ներկայացնող այնպիսի արդյունքներ, ինչպիսիք են՝ սերնդի վերարտադրությունը, մարդկային կապիտալի ձևավորումը, դրանում անհատի մասնակցությունը, ինքնուսուցումը և որակի բարձրացումը, նման այլ արդյունքները, որոնց սպասողը հիմնականում հենց հասարակությունն է:

Երևի չարժեն նշել տնտեսության ստվերային հատվածում արտադրվող և ՀՆԱ չներառվող արդյունքների գոյությունը և ոչ փոքր ծավալը, որը մշտական քննարկման առարկա է, սակայն և չի ստանում իր կարևորությանը համարժեք լուծում: Կարծում ենք՝ ուշադրության է արժանի արտադրված, սակայն շուկայում չիրացված ապրանքների ՀՆԱ-ում հաշվառման հարցը, քանի որ կասկածելի է արդյունք համարել այն ապրանքը, որի նկատմամբ պահանջ հասարակությունում չկա: Կարծում ենք, կարելի է նշել և այլ փաստեր (օրինակ, տարաբնույթ տրանսֆերտների իրողությունը), որոնք ցուցում են ՀՆԱ-ի որոշման գործում այժմ առկա թերությունները և գործող համակարգի անկատարությունը:

ՀՆԱ ցուցանիշը որպես տնտեսության զարգացման և բնակչության կենսամակարդակի կարևոր չափորոշիչ, հիմք է միջազգային համեմատությունների համար, որոնցով որոշվում է կոնկրետ երկրի դիրքը այլ երկրների շարքում: Այդպիսի համեմատությունների համար անհրաժեշտ է, որ ՀՆԱ-ի հաշվարկման մոտեցումը ապահովի տարբեր երկրներում դրա մեծությունների համադրելիությունը: Բացի այդ, կան նաև այլ խանգարող հանգամանքներ, որոնք կասկածի տակ են դնում երկրի համեմատական զարգացման աստիճանի գնահատման ճշգրտությունը ըստ ՀՆԱ-ի հաշվարկված մեծության: Այդպիսիք են, օրինակ, ՀՆԱ-ում ներառվող արդյունքների որակային կողմի, գործող գների, ծառայության տևողության, արտադրության տարում շուկա դուրս չգալու, հետագա իրացման հնարավորության, երկրի արժույթի գնողունակության պարի-

տետի, արտադրության գիտելիքահենքության և գիտատեխնոլոգիական մակարդակի, արտադրողների կենսամակարդակի, աշխատանքի պայմանների, աշխատաժամանակի տևողության, լավածության, վարձատրության չափի, ազատ ժամանակի, որակային մակարդակի, հնարավորությունների օգտագործման, կենսամիջավայրին հասցվող վնասի և այլ պայմանների ոչ բավարար արտացոլումը: Համեմատվող երկրներում դրանց միջև այդ պայմանների տարբերությունները անկասկած պայմանավորում են նաև արտադրված ՀՆԱ-ի որակային տարբերություններ, հետևաբար և որոշակի անհամադրելիություն:

ՀՆԱ-ի հաշվարկման, տվյալ տարում ստեղծված արդյունքները դրանում ներառելու և այլ թերությունների վերը բերված թվարկումն իսկ արդեն ցուցում է հաշվարկված և իրականում ստեղծված ՀՆԱ-ի միջև զգալի տարբերությունների գոյության հնարավորությունը: Դա պահանջում է տնտեսության այդ կարևորագույն չափորոշիչի գնահատման մոտեցումների նորովի վերանայում և ճշգրտում, ընդ որում՝ միջազգային ընդգրկումով:

ԱՐՋՈՒՄԱՆ ՉԱԿՈՒՅԱՆ

*ՀՀ ԳԱՍ Մ. Զոբանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի թեմայի ղեկավար*

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆ-ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսագիտությունն այսօր նոր հարցադրումներով է հանդես գալիս իր ուսումնասիրման օբյեկտի՝ տնտեսական համակարգի զարգացման օրինաչափությունների ու հեռանկարների վերաբերյալ: Եվ դա պատահական չէ: Նախ և առաջ, գիտության ցանկացած ուղղության մեթոդաբանության կատարելիության և կանխատեսումային կարողության աստիճանը որոշվում է նրանով, թե ինչ խորությամբ և լրիվությամբ է այն ընդգրկում ուսումնասիրվող օբյեկտում ընթացող էվոլյուցիոն պրոցեսները: Երկրորդը, գիտության բոլոր և այդ թվում հասարակական, տնտեսական ուղղությունները լրացվում և խորանում են էվոլյուցիոն բովանդակությամբ, որը հանդես է գալիս ճանաչողության իր աշխարհայացքային, ինտեգրացիոն հատկությամբ առաջին հայացքից իրարից բավական հեռու գիտական ուղղությունների և ոլորտների համար: Երրորդը, տնտեսական համակարգը այսօր ակտիվ էվոլյուցիոնացվող համակարգ է, այն ապահովում է մարդու, քաղաքացու բարեկեցությունը, կյանքի բնականոն աճն ու զարգացումը, և այդ տեսակետից էլ տնտեսական համակարգերի էվոլյուցիոն զարգացման ուսումնասիրումը և նրա օրինաչափությունների բացահայտումն ունեն անգնահատելի բարձր գիտագործնական նշանակություն: Վերջապես չորրորդը, հասարակագիտության և հատկապես տնտեսագիտության թերզարգացածությունը բնագիտական ուղղությունների համեմատ (կենսաբանություն, երկրաբանություն տիեզերքաբանություն և այլն), էվոլյուցիոն պրոցեսների ընթացքի բացահայտման տեսակետից, վերածվեց անհաղթահարելի խոչընդոտի, որը և ճանաչողության արգելակման հիմնական պատճառներից է գիտության այս ոլորտում: Հետաքրքիրն էլ այն է, որ դարվինիզմի ձևավորման համար Մալթուսի և Մմիթի տնտեսագիտական գաղափարները սկզբունքային դեր ու նշանակություն են ունեցել ձևավորելու ընդհանուր էվոլյուցիոն տեսության գիտական սկզբունքները¹: Բացահայտվեց, որ կենդանի բնության մեջ էվոլյուցիայի շարժիչ ուժը

¹ Зойдов К.Х. Эволюционно-институциональный подход и методология проведения антикризисных мероприятий в переходной экономике ЭММ, 2004г. том 40, N3, стр.16.